

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Դերանունը՝ որպես խոսքի մաս

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Պարսամյան

Կոտայքի մարզ, « Ակունքի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	
Error! Bookmark not defined.	
Դերանունը՝ որպես խոսքի.....	4
ՈՒՀՁ դասապլանի օրինակ.....	17
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ.....	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանգուցային բառեր. խոսքի մասեր, առարկա, հատկանիշ, առարկայի հատկանիշ, գործողության հատկանիշ, փոխարինող բառեր, շարահյուսական կիրառություն:

Ղերանունները հայ քերականագիտության ուշադրության կենտրոնում են եղել հնագույն ժամանակներից: Այդ ուշադրությունը պատահական չէ, քանի որ դերանունը իր խոսքիմասային ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով յուրահատուկ տեղ է զբաղեցնում հայերենի խոսքի մասերի շարքում: Այդ պատճառով էլ դերանվան՝ որպես խոսքի մասի սահմանումը մշակման երկար ճանապարհ է անցել: Այդ սահմանման հիմքում լեզվաբանները դրել են մերթ դրանց իմաստային յուրահատկությունը, մերթ ձևաբանական առանձնահատկությունները, մերթ էլ շարահյուսական կիրառությունները: Բայց գիտության փորձը ցույց է տվել, որ դերանունների խոսքիմասային յուրահատկությունը սահմանելիս այս հիմունքներից մեկը առանձին վերցրած բավարար չէ: Լեզվաբանների մի քանի սերնդի ջանքեր էին հարկավոր վերջապես համոզվելու համար, որ դերանունները սահմանելիս պետք է հաշվի առնել այդ բոլոր հատկանիշների ամբողջությունը, մասնավորապես դրանց ընդհանրական իմաստը, որով դերանունները իսկապես սկզբունքորեն տարբերվում են մյուս խոսքի մասերից:

Այս և մի շարք այլ հարցերի ենք անդրադարձել աշխատության մեջ՝ փորձելով տալ սպառիչ պատասխաններ:

Մեր նպատակն էր դրական շարադրանքով ներկայացնել այն հիմնահարցերը, որոնք այսօր կան հայ լեզվաբանության մեջ:

Իսկ հետազոտական աշխատանքի վերջում կցված ՌԻՀՁ դասապլանը /2000-ականների սկզբին համընդհանուր ձեւավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձեւավորում (ՌԻՀՁ)/՝ որպես օրինակ է ներկայացվել՝ գիտակցելով, որ տարրական դասարաններում սովորողները կարող են միայն ծանոթանալ դերանուններին, և դրանք գտնել տեքստում՝ տեքստային աշխատանքի միջոցով և ուսուցչի անմիջական օգնությամբ: Այդ է պատճառը, որ դրան փորձել ենք հասնել ինքնուրույն

ընթերցանության ժամին՝ տալով ընդհանուր գաղափար դերանունների մասին այն
բանաստեղծության միջոցով, որտեղ հանդիպում են դերանուններ:

ԴԵՐԱՆՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Տարբեր լեզվաբաններ, իբրև խոսքի մասերի որոշման հիմունք, ընդունում են տարբեր հատկանիշներ: Ոմանք այդպիսի հիմունք են համարում բառերի բոլոր հատկանիշները՝ իմաստային, ձևաբանական, շարահյուսական: Ոմանք ուշադրություն են դարձնում բառակազմական հատկանիշի վրա, մյուսները փոխարինման և այլն:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ըմբռնվում դերանունը որպես խոսքի մաս հայ լեզվաբանների կողմից: Հույն քերական Դիոնիսոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության մեջ կարդում ենք. «Դերանունություն է բառ փոխանակ անուան առեալ, որոշեալ դիմաց յայտական»: Դերանվան փոխարինման հատկանիշի՝ հունական քերականության սահմանված այս դրույթը իշխել է հայ քերականագիտության մեջ՝ սկսած Դ. Թրակացու քերականության հայ մեկնիչների աշխատություններից մինչև 19-րդ դարի քերականությունները (Մ. Ասատրյան, հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Եր., 1973, էջ 90): Այսպես, օրինակ՝ Գ. Ավետիքյանը գրում է. «Երկրորդ մասն բանին կոչի դերանուն, այսինքն բառ, ինչ որ փոխանակ անուան դրուի» (Գ. Ավետիքյան, Քերականություն հայկական, Վենետիկ 1829, էջ 34):

Ս. Բագրատունու քերականության մեջ կարդում ենք. «Դերանուն և փոխանուն են բառի, որ դեմս կամ կարգ ինչ յայտ առնեն և ի տեղի անուանաց դնին առ ի չկրկնեըց զայնս» (Ս. Բագրատունի, հայերեն քերականությունիսպետսզարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 85):

Դերանվան փոխարինման հատկանիշի վրա են շեշտը դնում նաև աշխարհաբարի քերականներ Ա. Այտրնյանը և Ս. Պալասանյանը: Այտրնյանը գրում է. «Դերանուն կ'ըսուի երկրորդ մասն բանի՝ որ գոյական անունը շատ անգամ չկրկնել ու համար անոր տեղը կըդրուի» (Ա. Այտրնեան, Քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննաի, 1883, էջ 29): Ս. Պալասանյանի ևս համարյա նույնն է, միայն սահմանման մեջ նշվում է, որ դերանունները փոխարինում են նաև ածականներին: Վերջինս գրում է. «Այն բառերը, որոնք գոյական ու ածական անունների տեղ են դրվում, կոչվում են դերանուն » (Ս. Պալասանեան, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս., 1906, էջ 70):

Գալով դերանվան ստորաբաժանման հարցին՝ պետք է նշել, որ 19-րդ դարի հայերենի քերականությունների մեջ արդեն սահմանվել էին այս խոսքի մասի հիմնական տեսակները:

Այս շրջանում դերանվան ստորաբաժանումների մասին գաղափար կազմելու համար ծանոթանանք Ս. Պալասանյանի քերականությանը:

Ըստ շարահյուսական կիրառության՝ նա դերանունները բաժանում է երկու խմբի՝ գոյական դերանուններ ու ածական դերանուններ:¹,- գրում է Ս. Պալասանեանը: Ըստ տարբեր նշանակության՝ նրանք ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ հարցական, անձնական, ստացական, ցուցական, հարաբերական և անորոշ:

1. «**Հարցական** դերանունները գործ են ածվում իբրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ»: Դրանք ստորաբաժանվում են 3 խմբի. Գոյական **ո՞վ**, ածական՝ **ո՞ր**, **որպի՞սի**, ածական ու գոյական միաժամանակ՝ **ի՞նչ**:
2. «**Անձնական** դերանունները անձերի տեղ են դրվում և գործ են ածվում խոսակցության մեջ»: Դրանք են՝ **ես**, **մենք**, **դու**, **դուք**, **ինքը** , **իրենք**: Ընդգծվածները միշտ գոյական են:
3. Դրանք լինում են գոյական՝ **սա**, **դա**, **նա** և ածական **այս**, **այդ**, **այն**, **այսպիսի**, **այդպիսի**, **այնպիսի**, **այսինքն** կամ **այսչափ** , **այդքան**, **այնքան**:
4. Դրանք են՝ **իմ**, **քո**, **յուր**, **մեր**, **ձեր**, **իրենց**:
5. « **Հարաբերական** դերանունը մեկն է՝ **որ**: Այս դերանունը գործ է դրվում երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապելու և ցույց է տալիս այն առարկան, որ մեկնվում է երկրորդական նախադասությամբ:- Այն ջուրը, որ ամեն կողմից ցամաքով պատած է , կոչվում է լիճ»:
6. «**Անորոշ** դերանունները վարվում են գոյական և ածական անունների տեղ անորոշ, երբեմն էլ բացասական մտքով, **յուրաքանչյուր**, **ամեն**, **մյուս**, **ոմանք**, **նույն**, **ոքմին**, **իքմին**, **ոչինչ**: Անորոշ դերանունների մեծ մասը թե գոյականաբար են վարվում և թե ածականաբար»:⁷

Ինչպես տեսնում ենք, դերանվան սահմանումը և դերանունների ստորաբաժանումը Պալասանյանի մոտ զգալիորեն մոտենում է ժամանակակից

պատկերացումներին, այսինքն՝ 19-րդ դարի հայ լեզվաբանի համար արդեն պարզ էր դերանվան խոսքիմասային յուրահատկությունը որոշելու էական հիմունքներից մեկը՝ նրանց փոխարինման դերը, ինչ վերաբերում է դերանունների ստորաբաժանմանը, ապա մասնավորապես, անձնական, ցուցական, հարցական դերանունների՝ Ս. Պալասանյանի թվարկումը գրեթե նույնանում է այսօր ընդունվածի հետ: Այժմ ծանոթանանք Ս. Աբեղյանի դրույթներին և տեսակետներին: Ս. Աբեղյանը խոսքի մասերը որոշում է ձևաբանական և շարահյուսական տեսակներից: Գոյականները, ածականներն ու մակբայները ըստ իրենց նշանակության նաբաժանում է երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն: «Անուններն ունեն անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունեն, այլ ամեն անգամ նա նայելով, թե ինչ անվան տեղ են դրվում, ինչ անվան են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են՝»:

Ս. Աբեղյանը գոյականների մեջ տարբերակում է չորս կարգի բառեր՝ 1. Անուն գոյական կամ գոյական անունը(տուն, փայտ): 2. Թվական գոյական կամ գոյական թվական (տասնյակ, հիսնյակ), 3. Դերբայ գոյական կամ գոյական դերբայ, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել), 4. Դերանուն գոյական կամ գոյական դերանուն (ես, դու, նա, ինքը, սա, դա):

Ս. Աբեղյանը նշված դերանունները գոյականների շարքին է դասում ոչ թե այդ բառերի իմաստային, այլ նրանց հոլովվելու և գոյականին հատուկ շարահյուսական ֆունկցիաներ կատարելու հատկանիշից ելնելով:

Նույնպիսի մոտեցումով նա գնահատում է նաև **այս, այդ, այն, սույն, դույն, նույն , իմ, քո, իր, մեր, ձեր** բառերը՝ համարելով դրանք դերանուն ածական կամ ածական դերանուններ, իսկ **աստ, անդ, ուր** դերանունները՝ դերանուն մակբայ կամ մակբայ դերանուն:

Խոսքի մասերի, մասնավորապես դերանվան դասակարգման հիմունքների մասին Ս. Աբեղյանի այս դիտարկումներից շատ բան հետագայում լեզվաբանության մեջ կամ ճշտագրովում է կամ առհասարակ մերժում: Բայց Աբեղյանի դիտողություններում մի կարևոր պահ դերանվան սահմանման բնագավառում է ակնառա առաջընթաց է նշանակում. Դա նրա ակնարկն է դերանունների ընդհանրական, չտարբերակված իմաստի մասին:

Մ. Աբեղյանը դերանունները բաժանում է չորս խմբի՝ անձնական, ցուցական, փոխադարձ և հարաբերական:

«Անձնական դերանունները դրվում են բայի դեմքի լրացման,

այսինքն՝ ենթակայի անվան տեղ, եզակի առաջին դեմքի համար՝ **ես, ինքս**, երկրորդ դեմքի համար՝ **դու, ինքդ**, երրորդ դեմքի համար՝ **նա, ինքը**, հոգնակի թվի համար համապատասխանաբար՝ **մենք, ինքներս, դուք, ինքներդ, նրանք, իրենք**»:

«Ցուցական դերանունները **սա**՝ դրվում են մի անվան տեղ, երբ առարկան ցույց է տրվում կամ մտքով ակնարկվում է»:

«Փոխադարձ ասվում են այն դերանունները, դրվում են խոսքի մեջ եղած երկու կամ ավելի անունների տեղ և բայի իմաստն այնպես են արտահայտվում, որ թե մեկ և թե մյուս առարկայի համար է հասկացվում»։ դրանք են՝ **միմյանց, իրար, մեկմեկու**:

«Հարաբերական կամ շաղկապական կոչվում է **որ** դերանունը»¹: Միաժամանակ նշվում է, որ հարաբերական դերանվան իմաստով գործ են ածվում նաև **ով, ինչ, որ, երբ** հարաբերական անորոշ անունները:

Հեշտ է նկատել, որ թեև Աբեղյանը դերանուններն ստորաբաժանում է չորս տեսակի՝ այժմ ընդունված ութի փոխարեն, բայց նրա բերած անձնական, ցուցական, փոխադարձ, հարաբերական դերանուններն արդեն գրեթե նույնանում են ժամանակակից քերականագիտության մեջ ընդունվածների հետ:

Դերանունը ընդարձակ ուսումնասիրության է ենթարկված Հ. Աճառյանի կողմից: Նա իր «Լիակատար քերականության» երկրորդ հատորում հին քերականների նման դերանվան բնորոշման ժամանակ շեշտը դնում է նրա փոխարինման հատկանիշի վրա:

« Դերանունը նյութական նշանակությունից զուրկ է,- գրում է Հ. Աճառյանը,- աշխարհիս անցյալ, ներկա և ապագա միլիարդավոր բնակիչներ կարող են ասել **ես**, և այդ բառը կարող է նշանակել այդքան անհատ: Բոլոր այդ միլիարդավոր բնակիչները կարող են ասել **իմ** կամ **իմը** և նշանակել իրենց մի թեև մագից սկսած մինչև աստղերը, հորիզոնն ու արեգակը:

Ըստ այսմ՝ դերանունն ամբողջովին անորոշություն է և որևէ կապակցությամբ միայն կարող է նշանակել այսինչ առարկան: Այս ձևով դատելով՝ գոյականը առարկայի ընդհանուր անունն է, առանց ցույց տալու, թե որն է, իսկ դերանունը ցույց է տալիս, թե որն է առանց այդ առարկայի անունը տալու»²:

Այսպիսով, Աճառյանն ընդհուպ մոտենում է դերանվան խոսքիմասային հիմնական յուրահատկություններից մեկի՝ նրա ընդհանրական իմաստի ուղղակի ըմբռնմանը:

Հ. Աճառյանը ընդունում է միայն գոյական դերանուններ. Ըստ նրա՝ հատկանշային նշանակություն արտահայտող դերանունները դերանուն խոսքի մասի մեջ չեն մտնում այլ՝ ածականներ են:

Դերանունները բաժանելով էական կամ անձնական, անդրադարձ, փոխադարձ, ցուցական, ստացական, հարաբերական, հարցական և անորոշ տեսակների՝ Աճառյանը նշում է . « Հաճախ միննույն բառը նախադասության մեջ դառնում է մերթ դերանուն և մերթ էլ ածական: Դերանուն է բառը՝ երբ առանձին է գործածվում կամ բայի հետ, ածական է, երբ գործածվում է գոյականի հետ:

1)Այս տունը ավելի մեծ է, քան այն տունը: 2) Այս ավելի մեծ է, քան այն: Առաջին նախադասության մեջ **այս** կամ **այն** բառերը ցուցական ածական են, իսկ երկրորդի մեջ՝ ցուցական դերանուն»¹: Հ. Աճառյանը ենթադրում է, թե « դերանունները նախապես գոյականներ էին, որոնք հետո գործածության մեջ շարունակ մաշվելով դարձան կրճատ, անճանաչելի բառեր՝ դերանուններ»:

Դերանունների խոսքիմասային հատկանիշների հարցը շատ է զբաղեցրել վերջին շրջանի հայ լեզվաբաններին: Օգտագործելով դասական լեզվաբանության փորձը՝ նրանք առաջ են քաշել սկզբունքային նոր տեսակետներ, որոնք նորովին են լուսաբանում դարավոր հնություն ունեցող խնդիրը:

Վերջին շրջանի հայ լեզվաբաններից առաջինը այս հարցին անդրադարձել է Գ. Մևակը: Նա սխալ է համարում այն քերականների կարծիքը, որոնք հաշվի են առնում դերանվան ոչ թե իմաստը, այլ պաշտոնը, ֆունկցիան: Նա գտնում է, որ դերանունը նույն իմաստն ունի, ինչ և գոյականը, ածականը, թվականը /նաև մակբայը/՝ այն տարբերությամբ, որ իր իմաստն արտահայտում է ընդհանուր կերպով, առանց տարբերակման:

Դերանունների խոսքիմասային առանձնահատկությունները հատուկ քննության առարկա է դարձրել Ս. Աբրահամյանը իր « Արդի հայերենի դերանունները» մենագրության մեջ, հետագայում՝ նաև. « Ժամանակակիցհայերենիքերականություն» գրքում:

Նա նշում է, որ դերանունը, որպես խոսքի մաս, նախապես ճանաչվել է փոխարինման ֆունկցիայով: Այդ տեսակետը դերանունների վերաբերյալ տարածված տեսակետն է: Հեղինակը չի ժխտում որոշ դերանունների փոխարինման հատկանիշը, բայց և աշխատում է ցույց տալ, որ դա դերանվան հիմնական հատկանիշը համարվել չի կարող նշելով, որ դերանվան փոխարինման ֆունկցիայի տակ հասկացվում է բառի հնարավոր գործածությունը դերանունով փոխարինելը՝ այն չկրկնելու նպատակով, նա գտնում է, որ դերանունների մեծ մասը գուրկ է փոխարինման ֆունկցիայից և այլ բառերով արտահայտվել չի կարող /1-ին և 2-րդ դ. անձնական դերանունները և այլն/: Մյուս կողմից՝ փոխարինման ֆունկցիա հաճախ կատարում են նաև այլ խոսքի մասեր, Օրինակ՝ Գուրգենը և Սուրենը սովորում են 5-րդ դասարանում. Երկուսն էլ գերազանցիկներ են:

Այնուհետև Ս. Աբրահամյանը անցնում է դերանունների և այլ խոսքի մասերի հարաբերակցության հարցին:

Եթե որոշ լեզվաբաններ, այդ թվում նաև Մ. Աբեղյանը դերանունները միացնում են հարաբերակից խոսքի մասերին, ապա Ս. Աբրահամյանը գտնում է,

1. Այդ վերաբերակցությունը պետք է ընդունել զգալի վերապահությամբ,
2. Նույնիսկ հարաբերակցության առարկայության դեպքում դերանունները չի կարելի նույնացնել այլ խոսքի մասերի պատկանող բառերի հետ, դասել այդ խոսքի մասերի շարքը, քանի որ եթե վերջիններս ունեն տարբերակված իմաստ, որի պատճառով էլ անվանում են առարկան, հատկանիշը, ապա դերանունների իմաստը տարբերակված չէ, այլ ընդհանուր կամ համընդհանուր, որի պատճառով էլ նրանք ոչ թե անվանում, այլ ցույց են տալիս, ակնարկում են առարկան, հատկանիշը ընդհանուրկերպով:

Ընդունելով հանդերձ, որ դերանունները իրոք չունեն ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների միասնությունը, քանի որ դրանց մի մասը հանդես է գալիս գոյականին, իսկ մյուս մասը՝ ածականին հատուկ շարահյուսական պաշտոններով և այլն, լեզվաբանը գտնում է, որ «խոսքի մասերը որոշելիս չպետք է բառերի քերականական հատկանիշներին վերագրել միայն վճռական դեր և որ մասնավորապես դերանվան, որպես խոսքի մասի որոշման հարցում քերականական հատկանիշները երկրորդական են և կարևորը նրանց իմաստային առանձնահատկություններն են»:

Ս. Աբրահամյանը, Գ. Սևակի՝ դերանվան մասին արտահայտված դրույթների համաձայն, գտնում է, որ, ի տարբերություն գոյականների, ածականների, թվականների և մակբայների, որոնք տարբերակված առարկաների և հատկանիշների անվանումներն են, դերանունները ցույց են տալիս չտարբերակված առարկա կամ առարկա ընդհանուր ձևով, չտարբերակված հատկանիշ կամ հատկանիշ ընդհանուր ձևով:

Սակայն նա ճիշտ կերպով նկատում է, որ ընդհանուր կամ համընդհանուր իմաստ կարող են ունենալ նաև այլ բառեր, օրինակ՝ **մարդ**- «բան է անում», «բան չի կերել» և այլն:

Ի՞նչ կա դերանունների և այդ բառերի միջև: «Դերանունների բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է առարկան այս կամ այն հարաբերությամբ ցույց տալու հատկանիշը ի տարբերություն գոյականների»:

Հեղինակը հարաբերության իմաստը տարածում է բոլոր դերանունների վրա ընդհանրապես: Այսպես օրինակ՝ նա **բոլոր** դերանվան մասին գրում է, որ դրա մեջ առկա է ոչ միայն քանակի չտարբերակված իմաստ, այլև՝ առարկաների ընդհանրական հարաբերության իմաստ, իսկ, ասենք, **ումն** դերանվան մեջ դրսևորվում է մասնական հարաբերության իմաստ:

Նշենք, որ հեղինակի՝ այս թեզի ապացույցը համոզիչ չէ, ինչպես նաև խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի հարցը:

Այսպես, Ս. Աբրահամյանը գրում է. «Դերանունների ունեցած հարաբերության իմաստով ընդհանուր առմամբ արտահայտվում են նաև խոսողի հարաբերությունը կամ վերաբերմունքը ցույց տվող առարկայի, հատկանիշի նկատմամբ»:

Միսալ կլինի ասել, որ օրինակ՝ **բոլոր, մի քանի, ամեն** և նման բառերի կամ **ես, դու, նա, այս, այդ, այն** և այլ դերանունների մեջ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն է գործում:

Այնուհետև նա քննության է ենթարկում դերանունների՝ տարբեր խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, թվականի, մակբայի հետ ունեցած հարաբերակցության հարցը: Եթե սրանք անվանում են առարկա, առարկայի տարբեր հատկանիշներ՝ որակային ու հարաբերական և թվային, ապա դերանունը չի անվանում ոչ առարկա, ոչ հատկանիշ: « Դերանուններին հատուկ է առավել ընդհանրական, չտարբերակված իմաստ, որը ոչ միշտ է բացարձակ, կան առարկա

ցույց տվող և որակային ու քանակային հատկանիշ ցույց տվող դերանուններ. Առաջին խմբի մեջ տարբերվում են անձ ցույց տվող (ես, դու, ինքը, ոմն, ով և այլն) և իր ցույց տվող (սա, դա, ինչ և այլն) դերանունները»:

Հետո Ս. Աբրահամյանը շարադրում է իր հիմնական միտքը՝ գոյականի և դերանվան տարբերությունը այն է, որ « միննույն առարկան գոյական անվանումով է արտահայտվում, իսկ դերանունը չի անվանում, այլ՝ ցույց է տալիս, ակնարկում է որևէ հարաբերությամբ (դիմային՝ **ես**, տարածական՝ **սա** և այլն)»:

Ս. Աբրահամյանը հարաբերության հատկանիշը սերտորեն կապում է դերանվան մյուս հատկանիշի՝ համընդհանուր իմաստի հետ և տալիս նրա սահմանումը: «Այսպիսով՝ դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ՝ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ»:

Ըստ իմաստային հատկանիշների՝ դերանունները բազմաբնույթ են, այսինքն՝ նրանց մի մասը առարկա է ցույց տալիս, մյուս մասը՝ առարկայի հատկանիշը, երրորդ մասը գործողության հատկանիշը:

Նա դերանունները հոլովման տեսակետից բաժանում է երեք խմբի՝

«1. Դերանվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ՝ **ես(մենք), դու(դուք), ինքը, նա, սա, դա, ով**:

2 . Անվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ, ինչպես՝ **ամենքը, ամեն ինչ, ոչինչ, բոլորը, այստեղ** և այլն:

3 . Չհոլովվող դերանուններ, ինչպես՝ **այսպես, այդպես, այնպես, այս, այդ, այն, որևէ** և այլն»:

Դերանունները անմիօրինակ են նաև թվի կարգի տեսակից: Կան քերականական թիվ ունեցող և չունեցող դերանուններ: Դերանունների հոգնակի թիվը թե՛ ձևային, թե՛ իմաստային տեսակետից ունի որոշ առանձնահատկություններ այլ խոսքի մասերի նույն քերականական համեմատությամբ: Խոսքը, իհարկե չի վերաբերում բոլոր դերանուններին:

Ս. Աբրահամյանը խմբերի է բաժանում նաև թվի քերականական կարգ ունեցող դերանունները.

«1. Դերանուններ, որոնք ունեն և՛ հոգնակի, և՛ եզակի թիվ, ինչպես, **սա, ով, ինչ, ինքը** և այլն:

2. Միայն հոգնակի թիվ ունեցող դերանուններ , ինչպես՝ **այս , այդ, այն, յուրաքանչյուրը** և այլն»:

Պրոֆեսորը մի շարք քննություններ կատարելուց հետո հանգում է այն ճիշտ եզրակացությանը, որ « դերանվան մեջ միավորված են ձևաբանական ու շարահյուսական ամենատարբեր հատկանիշներ ունեցող բառեր, այդ միավորումը կատարված է իմաստային որոշակի հատկանիշի հիման վրա»:

Դերանունների խոսքիմաստային հատկանիշների յուրահատուկ մոտեցմամբ է անդրադարձել Հ. Բարսեղյանը: Իր « Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» աշխատության մեջ նա հետևյալ կերպ է ներկայացնում դերանվանական բառերին բնորոշ առանձնահատկությունները.

ա) « Անվանական բառերն ունեն նյութական և միաժամանակ քերականական նշանակություն, մինչդեռ
դերանուններն ունեն միայն քերականական նշանակություն»:

բ) «Շարակարգից դուրս դերանունների բառիմաստները չունեն արտալեզվական օբյեկտներ: Իմաստային այս յուրահատկությունը նկատի ունենալով, որոշ լեզվաբաններ դերանունները ճանաչում են որպես ամենաընդհանուր կամ «չտարբերակված» բառային իմաստ ունեցող բառերը:

գ) «Դերանունները բառ -նշաններ են, որոնք իրենց բառային կոնկրետ նշանակությունը ձեռք են բերում նախադասության մեջ»¹: Այս առանձնահատկությունը նկատի ունենալով՝ Աճառյանը գրել է. «Ըստ այսմ՝ դերանունն ամբողջովին անորոշություն և որևէ կապակցությամբ միայն կարող է նշանակել այսինչ առարկան: Այս ձևով դատելով՝ գոյականը առարկայի ընդհանուր անունն է, առանց ցույց տալու, թե որն է, առանց այդ առարկայի անունը տալու»²:

դ) Դերանունները քերականական ընդհանուր և մասնակի նշանակությունների (կարգերի) բառային արտահայտիչներն են:

ե) Նրանց իմաստային կառուցվածքի համալիրի բառային իմաստի վանդակը խոսքից դուրս դատարկ է, այն լրացվում է խոսքիմասային իրադրության մեջ, զգայական ընկալմամբ:

զ) Դերանուններն էլ անվանական բառերի նման ունենում են անկախ գործածություն և դառնում են նախադասության անդամ:

է)Դերանունները կարող են գործածվել տվյալ խոսքի մասին պատկանող բոլոր բառերի փոխարեն :

ը) Նախադասության մեջ դերանունները պաշտոններ են ստանում ըստ իրենց խոսքիմասային ընդհանուր իմաստի և փոխարինում են անուններին հավասարապես:

թ)Ըստ շարակարգում ունեցած իրենց գործածության դերանունները ձևափոխվում են, ստանալով համապատասխան քերականական հատկանիշներ:

ժ/ Բառակապակցության մեջ դերանուններն անունների նման շեշտակիր են:

ժա/ Հայերենը չունի դերանվանականաձանցներ և դերանվանական խոսքիմասակազմություն»:¹

Հ. Բարսեղյանը, հաշվի առնելով դերանունների իմաստային, բառակազմական, մասամբ էլ քերականական վերոհիշյալ հատկանիշները, դերանունը առանձին խոսքի մաս է համարում: Նա դերանունները դասակարգում է անուն խոսքի մասերին զուգահեռ.

1. **Գոյական դերանուն**- Առարկա կամ առարկայի դեմք մատնանշող դերանունները կոչվում են գոյական դերանուն:

Դրանք են՝ **ես /մենք/, դու /դուք/, նա /նրանք/ , ինքը /իրենք, ինքները/, սա /սրանք/, դա /դրանք/, նա /նրանք/, մերոնք, ձերոնք, իրար, միմյանց, մեկմեկու, ով /ովքեր/, ինչ /ինչեր/, որը /որոնք/, յուրաքանչյուրք, ոմանք, մեկը, մեկն ու մեկը, մի քանիսը, ոչ մեկը, ոչինչ, ոչ ոք:**

Գոյական դերանունները նախադասության մեջ գործածվում են գոյական անվան հիմնական և երկրորդական բոլոր պաշտոններով:

2. **Ածական դերանուն** –Առարկայի հատկանիշ մատնանշող դերանունները ածական դերանուններ են: Դրանք են՝ **այս, այդ, այն, միևնույն, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսինչ, այնինչ, ամեն, ամեն մի, ամենայն, ոմն, որոշ, ուրիշ, որևէ, որևիցե, այլ, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ինչ-որ, ինչ-ինչ, մի, որ, որպիսի, ինչպիսի:** Նախադասության մեջ այս դերանունները գործածվում են ածական անվան պաշտոններով՝ հիմնականում լինելով գոյական անվան լրացում՝ որոշիչ:

3. **Թվական /թվական – ածական/ դերանուն** – Առարկայի քանակային հատկանիշ մատնանշող դերանունները թվական դերանուններ են: Դրանք են՝ **այսքան, այդքան,**

այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, քանի, որքան, ինչքան, ինչչափ, որչափ, որերորդ, քանիերորդ:

Ինչպես թվական անունները, այնպես էլ թվական դերանունները նախադասության մեջ գործածվում են ածականի պաշտոններով՝ հիմնականում չլինելով գոյական անվան լրացում՝ որոշիչ: Գործածվում են նաև մակբայի պաշտոնով:

4. **Մակբայ դերանուն** – Գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ մատնանշող դերանունները մակբայ դերանուններ են: Դրանք են՝ **այսպես, այդպես, այնպես, նույնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, ինչպես, ինչու, ուր, որտեղ, երբ, երբևէ, երբևիցե:**

Նախադասության մեջ այս դերանունները գործածվում են մակբայի պաշտոնով և լինում են բայի լրացում՝ պարագա:

5. **Բայ դերանուն** – Գործողության կամ եղելության մասին ընդհանուր հարցում արտահայտող ինչ անել, ինչ լինել բայերը վերլուծական կազմության բայ դերանուններ են: Այսպես՝ ով եկավ - Արամը: Հայերենի քերականության դպրոցական դասագրքում Է. Աղայանն ու Հ. Բարսեղյանը շեշտը դնում են դերանվան փոխարինման գործառության վրա՝ միաժամանակ չանտեսելով նրա ընդհանրական, չտարբերակված իմաստը: Դասագրքում ընդունված է դերանվան 8 տեսակ՝

1. Անձնական դերանունները բոլոր դեպքերում գործածվում են անձի անվան փոխարեն և մատնացույց են անում խոսող, խոսակից կամ մի երրորդ անձ: Դրանք են՝ ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը:

Հոգնակիներն են՝ մենք, ինքներս, դուք, ինքներդ, նրանք, ինքները, իրենք:

2. Ցուցական դերանունները մատնացույց են անում առարկա, հատկություն, քանակ, գործողության տեղ ու ձև: Դրանք են՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, միննույն, մյուս, այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ, , նույնտեղ:

3. Փոխադարձ դերանունները գործածվում են գործողությամբ իրար հետ կապված առարկաների կամ անձերի անունների փոխարեն: Դրանք են՝ իրար, միմյանց, մեկմեկու կամ մեկմեկի:

4. Հարցական դերանուններն արտահայտում են հարցում խոսողին անձանոթ անձի կամ առարկայի, սրանց հատկության, թվի, գործողության տեղի, ժամանակի, ձևի և

այլնի մասին: Դրանք են՝ ով, ինչ, ինչպիսի, ինչքան, ինչչափ, ինչպես, ինչու, որ, որքան, որչափ, որպիսի, որերորդ, որտեղ, ուր, երբ, քանի, քանիսը, քանիերորդ:

5. Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են, որոնք, սակայն արտահայտում են ոչ թե հարցում, այլ մի նախադասության կապը, հարաբերելը մյուսին:

6. Որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների կամ անձերի հայտնի որոշյալ ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին –առանձին վերցրած: Դրանք են՝ ամեն/ը/, ամեն մի, ամեն մեկը, ամենքը, բոլոր/ը/, յուրաքանչյուր/ը/, ամենինչ/ը/, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ/ը/, ամբողջ/ը/, համայն, ամենայն:

7. Անորոշ դերանունները ցույց են տալիս անորոշ անձ, առարկան կամ անձի, առարկայի անորոշ հատկություն, քանակ: Դրանք են՝ ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, մի, մի քանի, մի քանիսը, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, ովևէ, երբևէ, երբևիցե, ինչևիցե, մեկնումեկը:

8. Ժխտական դերանունները մատնացույց են անում ամբողջությամբ ժխտվող առարկաներ կամ անձեր, առանց դրանք անվանելու: Դրանք են՝ ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը:

Գ. Ջահուկյանը իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ անդրադառնում է միայն դերանունների հոլովմանը՝ առանձնացնելով հատկապես թվի, հոլովի, դասի, և դեմքի կարգերը: Դերանունների հոլովական համակարգը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել նաև Էդ. Աղայանը: Այդ համակարգում նա առանձնացնում է հոլովման 3 տեսակ՝ դերանվանական, անվանական և խառը՝ կոնկրետ օրինակներով բնութագրելով դրանցից յուրաքանչյուրը և ցույց տալով դերանունների հոլովման ընդհանրություններն ու տարբերությունները գոյականների հոլովումից:

Դերանունների իմաստային ու ձևաբանական հատկանիշների վերաբերյալ ժամանակակից հայ լեզվաբանության մեջ եղած հիմնական պատկերացումների գիտական վերլուծությունն ու ամփոփումը տվել է Մ. Ասատրյանը իր «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» աշխատության մեջ: Վերլուծելով և համադրելով նախորդ քերականների տեսակետները՝ Մ. Ասատրյանը ընդհանուր հարցադրման մեջ առանձնացնում է երկու հիմնական պահ: Մի կողմից՝ դերանունները արտահայտելով առարկա, հատկանիշ, հատկանիշի հատկանիշ՝

տարբերվում են մյուս համապատասխան խոսքի մասերից, քանի որ այդ ամենը ցույց են տալիս առանց տարբերակման: Ահա այս առանձնահատկությամբ դերանունները կարելի է խմբավորել մի խմբի մեջ՝ իբրև առանձին խոսքի մաս: Մյուս կողմից, սակայն, դերանունները քերականական հատկանիշների միասնություն ու ընդհանրություն չունեն, իրարից տարբերվում են ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով՝ դրսևորելով տարբեր խոսքի մասերի՝ գոյականի, ածականի ու մակբայի հատկանիշներ:

Վերլուծելով այս երկու տեսակետներն էլ՝ Մ. Ասատրյանը գտնում է, որ դրանցից յուրաքանչյուրը ունի իր ինչպես հավասարի, այնպես էլ վիճելի կողմը: Իր հետևությունները նա հիմնավորում է այժմ ընդունված՝ դերանունների բոլոր տեսակների առանձին –առանձին քննությամբ՝ ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական առումներով: Այս ամենից հետո ուսումնասիրողը հանգում է հետևյալ եզրակացությանը. «...Ժամանակակից քերականություններում դերանուն խոսքի մասի մեջ են միավորվում միանգամայն տարբեր իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ երևան հանող բառախմբեր: Այսքանով էլ արդի քերականական համակարգով ներկայացված դերանունները քերականական միասնական խումբ չեն կազմում: Բայց դրա հետ միասին անժխտելի է նաև այն, որ դերանվան մեջ մրցվող առանձին բառախմբեր իրենց յուրահատուկ քերականական հատկանիշներով տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանք են հատկապես անձնական, փոխադարձ, ցուցական և հարցական-հարաբերական դերանունները, ըստ երևույթին, հենց այդ բառերն էլ կազմում են ժամանակակից հայերենի /իսկական/ դերանունները, իսկ ինչ վերաբերում է անորոշ, որոշյալ, ժխտական դերանուններին, ապա դրանք առանձնահատուկ քերականական հատկանիշներ երևան չեն հանում, և եթե մենք ևս վերջիններս ներկայացնում ու քննում ենք դերանունների բաժնում, ապա այդ անում ենք խիստ պայմանականությամբ՝ հետևելով ժամանակակից հայերենի քերականական համակարգով ընդունված դրույթներին»:

ՈՒՋ ԴԱՍԱՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿ

Ծանոթություն Դերանուն խոսքի մասին ինքնուրույն ընթերցանության ժամերին

Դասարանը- 3

Նպատակները- Դասի յուրացմանը հասնել լսելու և դիտելու, խոսելու, կարդալու, գրելու և ցուցադրելու միջոցով՝ նկատի ունենալով նաև ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդել (UDL): Ճանաչել դերանունները, դրանք տարբերակել տեքստի մեջ, կիրառել գրավոր և բանավոր խոսքում՝ օգտագործելով խաղային մեթոդներ: Սովորողին հնարավորություն տալ օգտագործել եռաչափ կրթության մոդելը՝ հասկացություն- գիտելիք- կարողություն/ հմտություն:

Անհրաժեշտ պարագաներ- կաշուն թերթիկներ, գունավոր մարկերներ, կավիճներ, համակարգիչ, ինտերնետ:

Դասի ընթացքը

Խթանում

1. Դասը ներկայացնել թեմային համապատասխան հոլովակով, որը հասանելի է նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հիմնականմասին -- 7 րոպե

<https://youtu.be/OKaQId25mNs>

2. Մտագրոհ՝ - 3 րոպե

Դերանուն բառը գրել գրատախտակին, այնուհետև խնդրել սովորողներին գրել իրենց մտքին եկած բառերը:

Այնուհետև քննարկել գրածները և սովորողների օգնությամբ սահմանել, թե ինչ է դերբայը: Այնուհետև ուսուցիչը առոգանությամբ կկարդա ինքնուրույն ընթերցանության նյութը՝ Վ. Դավթյան, Հայաստան, աշակերտներին կբաժանի խմբերի՝ ըստ բանաստեղծության և կխնդրի գտնել դերանունները: Կազմակերպել քննարկում- բացատրություն ուսուցչի աջակցությամբ:

Իմաստի ընկալում

1. Քննարկել և ամփոփել աշխատանքները՝ վերլուծելով նաև բանաստեղծությունը՝ քառյակ առ քառյակ՝ ըստ խմբերի:

2. Համապատասխանեցնել- 5-7 րոպե:

Սովորողներին բաժանել կաշուն թերթիկներ՝ գրված տարբեր դերանուններով: Նրանք պետք է պաստառի վրա ճիշտ տեղում փակցնեն:

անձնական	Ցուցական	Փոխադարձ

Քննարկել և ամփոփել աշխատանքը:

3. Դերանունների կազմությունը- *5րոպե:*

Կաչուն թերթիկներով լրացնել պաստառի աղյուսակը, տալ բացատրություն ուսուցչի անմիջական օգնությամբ, քանի որ տարրական դասարանում դերանունը դեռ հարցեր կարող է առաջացնել, բայց մեր նպատակն է ցածր դասարաններից սկսած տեղեկություններ տալ սովորողներին խոսքի մասերի վերաբերյալ:

պարզ	բարդ

Քննարկել և ամփոփել աշխատանքները:

Կշռադատում

1. Դասը ամփոփել սահիկով, որը հասանելի կլինի նաև տեսողական խնդիրներ ունեցող սովորողների համար: -3-5 րոպե

Նոր դասի հանձնարարում- 5-7 րոպե:

Ամփոփում և գնահատում- 3 րոպե:

Վարժությունները և խաղերը պետք է ընտրվեն այնպես, որ հնարավոր լինի հարմարեցնել տարբեր առանձնահատկություններ ունեցող սովորողներին: Ուսուցիչն ինքը պետք է հարմարեցնի դասարանին՝ ելնելով տվյալ սովորողի առանձնահատկությունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերջիվերջո լեզվաբանները հանգեցին այն եզրակացությանը, որ դերանունները շարունակում են նույնացվել այս կամ այն խոսքի մասի հետ՝ ըստ իրենց արտահայտած իմաստի: Բայց հետազոտության արդյունքում դերանունը գիտակցվեց իբրև միանգամայն ինքնուրույն խոսքի մաս, երբ քերականագիտությունը հասավ նրանց ընդհանրական իմաստի ըմբռնմանը:

Ուսումնասիրության հետաքրքիր ասպարեզ է բացվում նաև դերանունների շարահյուսական և ոճական կիրառությունների բնագավառում: Օրինակներով փորձել ենք ցույց տալ, որ դերանունները նույնանում են այն խոսքի մասերի հետ, որոնց փոխարինում են: Բայց դերանունների խոսքիմասային կիրառության շատ օրինակներ էլ ցույց են տալիս, որ նրանց իմաստային ու ոճական շատդրսևորումներ յուրահատուկ ու անկրկնելի են, որոնք չի կարելի փոխարինել այլ խոսքի մասերով:

Եվ մի կարևոր հանգամանք. թեմային տիրապետելով՝ անհրաժեշտ է նաև արդեն իսկ կիրառել նոր կարողություններ և հմտություններ: Համընդհանուր ներառական կրթության անցնելով՝ անհրաժեշտություն է առաջանում մեր առջև դրված խնդիրներին տալ լուծումներ, որին որպեսս մեկ քայլի փոփոխություն՝ առաջարկում ենք դասապլանները գրել և կիրառել ՈՒՀԶ-ի սկզբունքներին համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մանուկ, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965թ.
2. Աբրահամյան Սերգեյ, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956թ.
3. Աբրահամյան Սերգեյ, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969թ.
4. Աճառյան Հրաչյա, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1954թ.
5. Ասատրյան Մանվել, Հայոց լեզվի ձևաբ
6. Ներառական կրթության ռազմավարություններ: